

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ԱՌԱՋԻԿԱՅ 1893 ԹԻԱԿԱՆԻՆ

21-րդ ՏԱՐԻ

21-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ձեռագրերը.
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՌԻԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թամակաձի տանը): Կայտարարութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գրիմը հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ. Редакция газеты «МШАКЪ». Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով: Բառին վճարվում է 2 կոպեկ. «Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմյանիս լրագրիների յայտարարութիւնները, մասնաւորապէս ընդունվում են պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնաւորապէս տպագրելու առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս օրը երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լուի Պաստոր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի համառոտ պատմութիւն. Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ժողովը. Նամակ Բաթումից. Նամակ Զանգեզուրից. Նամակ Նոր-Բաջաբէից. Նամակ Կողբից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կարփի առեւտրական բարձրը. Տեղեկութիւններ Թիբեթացի Հայաստանից.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ձԵՆԱԳԻՆՆԵՐ.—ԲՈՐՍՍ.—ՍԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԼՈՒԻ ՊԱՍՏՈՐ

Ֆրանսիական գիտութիւնների ճեմարանի հրաւերով այսօր ամբողջ լուսաւոր աշխարհը ափսոսում է ֆրանսիացի գիտնական Լուի Պաստորի ծննդեան 70-ամեակը: Իր հրաւիրաբեր մէջ ֆրանսիական ակադէմիան յայտնում է, որ յոյս ունի թէ քոլոր քաղաքակիրթ երկրները կը միանան այս մեծ տօնախմբութիւնը կատարելու, որովհետեւ Պաստոր պատկանում է ընդհանուր մարդկութեան և դրա համար նրան յատկացրել են «մարդկութեան բարեբար» տիտղոսը եւ ճշմարիտ, ժամանակակից ոչ մի գիտնական այնքան ազգին ծառայութիւններ չէ մատուցել մարդկութեան, որքան քիմիկոս Պաստոր. այդ մատուցած ծառայութիւնը երկու խօսքով կարելի է արտայայտել. մարդկային ցարերի և տանջանքների անդուհալ և նրա բարեկեցութեան զարգացումը: Իր մեծ գիւտերով բժշկականութեան, քիմիայի, գիւղատնտեսական արդիւնաբերութեան զանազան ճիւղերին մէջ, Պաստոր այնպիսի յեղափոխութիւն կատարեց գիտութեան մէջ, որպիսին շատ քարեր մարդկութիւնը չէր տեսել: Այդ յեղափոխութեան և հիմնադրի գիտերի սկիզբը նրանով եղաւ, որ Պաստոր անձնատուր եղաւ միկրոօրգանի ուսումնասիրութեան և, այսպէս ասած, ստեղծեց բակտէրիոլոգիա գիտութիւնը: Պաստոր առաջինն եղաւ, որ ապացուցեց թէ ամեն խմորման, ամեն փրփուլման, ամեն բորբոսնութեան և թթւութեան սկզբնապատճառը մանրէի, գործարանաւոր մարմիններ են, որոնք կոչվում են միկրոօրգանիս: Այսպէս օրինակ, եթէ խաղողը քամելով ստացվում է մաճար գինի, որի մէջ չափաւոր մասը շատ է, յետոյ երբ մաճարը դառնում է իսկական գինի և ապա քայքայւում է, այդ միկրոօրգանի գործն է: Առհասարակ ամեն խմորման, փրփուլման, քայքայումն առաջ է գալիս միկրոօրգանի: Միկրոօրգանի այդ գիւտն եղաւ այն հիմնաբար, որի վրա կառուցվեց բակտէրիոլոգիան, մի գիտութիւն, որը թէեւ դեռ շատ մութ, չը բացատրված կողմեր ունի, բայց ահագին յեղափոխութիւն գործելով

մարդկային իմացականութեան մէջ, դեռ մեծ դեր ունի կատարելու ապագայում: Շնորհիւ այդ դերի կարելի եղաւ հաստատել, որ բոլոր վարակիչ հիւանդութիւնների՝ սիֆի, խոլերայի, թոքախտի պատճառը միկրոօրգանի են, նոյնպէս կենդանիների և միջատների զանազան հիւանդութիւնները առաջ են գալիս միկրոօրգանից. այդպիսով կարելի եղաւ շերամի որդնի հիւանդութեան պատճառն իմանալ, նրա առաջն առնել և շերամապահութիւնը փրկել կորստից: Պաստորի բոլոր գիւտերը գործնական մեծ հետեւեց են ունեցել մարդկութեան համար: Եթէ գիտութիւնը կարողանայ վարակիչ հիւանդութիւնների դեղատիւր զանել, մարդկութիւնը պարտական կը լինի այդ մեծ բարիքի համար Պաստորին: Եթէ այսօր գիւղատնտեսական արդիւնաբերութեան մի քանի ճիւղեր, ինչպէս շերամապահութիւնը, գինեգործութիւնը հսկայական քայլերով են զարգացել, դարձեալ Պաստորի շնորհով: Պաստորը գտաւ կատարելութեան, կատարել շան խաճման, ջրօղողութեան գեղը: Պաստորի մեթոդով այժմ հակախոլերային բժշկութեամբ են զբաղվում բազմաթիւ հիւանդանոցներ. իսկ յատկապէս Պաստորեան կոչված ինստիտուտում բժշկվում են կատարել շներից խաճվածները:

Լուի Պաստոր ծնվել է Ֆրանսիայի Դոյ քաղաքում 15/27 դեկտեմբերի 1822 թին: 18 տարեկան հասակում նա մտաւ համալսարան և երեք տարուց յետոյ ընդունվեց իբրեւ աշակերտ Ecole Normale դպրոցում: 1846 թին նա անուանվեց ֆիզիկական գիտութիւնների կցորդ-ուսուցիչ և երկու տարի ևս մնալով դպրոցում, քիմիայի դասատուի պաշտօնով, 1847 թին հռչակվեց դոկտոր: Հետեւեալ տարին նրանակվեց ֆիզիկայի դասատու Գիօմի լիցէում: 1854 թին վերջում նրան յանձնվեց կազմակերպել իւր քաղաքում նոր հիմնած գիտութիւնների ֆակուլտետը, իբրեւ երեք ուսուցչապետ: Երեք տարուց յետոյ (1857) նա վերադարձաւ Պարիզ՝ Ecole Normale դպրոցի ուսումնական տեսչութիւնն ստանձնելու: 1863 թին դեկտեմբերին, նա անուանվեց երկրաբանութեան, ֆիզիկայի և քիմիայի պրոֆէսոր գեղարուեստական դպրոցում, ապա քիմիայի պրոֆէսոր հռչակաւոր Սորբոնում: 1866 թին պակեց նրան Բուրժուրի մէջալով նրա կատարած ուսումնասիրութեան համար՝ լոյսի բերեղների մէջ ունեցած բնեւորացման վերաբերմամբ: 1853 թին նա ստացաւ Legion d'honneur-ի պատանդանքը: Քիմիայի մասին ունեցած աշխատութիւնների շարքում, ամենազգաւոր տեղն է բռնում հիւլէական քիմիայի ուսումնասիրութիւնը: Պաստորի աշխատութիւնները միշտ

արժանացել են ակադէմիական ամենանպաստաւոր գնահատութեան. նրանք տպված են զանազան գիտական հանդէսներում, իսկ առանձին գրքերով տպված են ի թիւս այլոց և հետեւիսերը, որոնք գրված են գլխաւորապէս մինչև 1870 թականը, այն է՝ խմորման նոր մի օրինակ, որ առաջանում է խոլորացուցական աղմկիներից, ընդունալ աղբիւրը առանց ազատ թթուանքի, «Ուսումնասիրութիւն գինու մասին, նրա հիւանդութիւնները և այդ հիւանդութիւնն առաջացող պատճառները», «Ուսումնասիրութիւն քաղաքի մասին, նրա հիւանդութիւնները և առաջն առնելու միջոցները»: 1870 թին Պաստորի աշխատութիւնները թիւս շատ մեծ տեղ կը բռնէր: Այդ մի երկու աշխատութեան անունն էլ յիշեցնէր մի գաղափար տալու համար: Ներշնչի է այն երկիրը, որի մի զաւակը կարող է կոչվել ընդհանուր մարդկութեան բարեբար և հայր:

Հ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏԱՍԽԱՆ

Բաւական ժամանակ է արդէն, որ Թիֆլիսի հայ թերթերի երկուսը միանան ուղղութեամբ և ջանքով աշխատում են պարզել իրանց պարզամիտ ընթերցողներին և նրանց միջոցով հասարակութեան դիւրահաւատ մասը հակակիր դարձնել դէպի Մայր Աթոռի ներկայ վարչութիւնը: Նրանք ամեն տեսակ սուտ և սխալ լուրեր հրատարակեցին և հրատարակում են, գտնելով շատ ռաւ աւատ պաշար մի երկու թղթակիցների զրպարտիչ և անհիմն լուրերի և նամակների մէջ: «Արարատ» հարկ չէ համարել դրանց պատասխանել, կարեւորութիւն չը տալով, և համոզված լինելով՝ որ հայ հասարակութիւնը ինքն արդէն ներկայումս շատ լաւ հասկանում է ամեն բան և շատ լաւ ճանաչում ամենին էլ: Սակայն այսօր այդ լուրերին խղիւ ստիպում է արդէն յանգընտութեան և ծայրահեղ ինքնամոռացութեան հասցրած մի վարմունք, որ նկատվում է վերջերս՝ կամաւ և չարամտութեամբ աղաւաղելով արտասովոր ամսագրիս պաշտօնականներից՝ Սինոդի օրագրիների քաղաքականութիւնը մի քանիսը:

«Արարատ» օգոստոս ամսատետրում (երես 762) նոյն ամսի 10-ի օրագրութեան քաղաքականութեամբ ասում է, որ Սինոդը հրաման տուեց խնամակարան 5-րորդ աստիճանի վրա նշանադրութեան պատկաւութեան և ահա յիշեալ թերթերից մէկը կանգնում ասում է թէ՛ ինչպէս տեսնում ենք «Արարատ» պաշտօնական բաժնից, Սինոդը պատկաւութեան հրաման է տուել խնամակարան չըհաստիճան 4-րդ և 5-րդ աստիճանի վրա: Ամսագրիս սեպտեմբերի տետրում (երես 839) նոյն ամսի 9-ի օրագրի քաղաքականութեամբ ասում է, որ Սինոդը հրամայեց Մայր Աթոռի գանձապահին տալ Մայր Աթոռի (միաբանութեան և բոլոր անուհական ճիւղերի) ճեմարանի և սուլարանի ծախսը համար յնդիքաց սեպտեմբեր ամսի 10,000 ռուբլի, որը ութն ամսուայ ընթացքում 64,000 ռուբլի ստացած գումարի հետ կանէ 74,000 ռ., իսկ նոյն թերթը աղաւաղելով այդ քաղաքում՝ ամբողջ ծախսը յատկացնում է ճեմարանին և զարմանցին (որ զարմանցին) և այդ հիման վրա հաշուելով ճեմարանի տարեկան ծախսը դնում է 104000 ռուբլի: Այդ տեսակ վարմունքը կարող են թոյլ տալ իրանց միայն խաղաղապէս վերացած մարդիկ, հասարակութեան վնասակար հրէշները: Այս մի քանի տողերով մատնացող լինելով այդ անպատկառ աղաւաղումների և ստախոսութիւնների վրա, «Արարատ» հասարակաց կար-

ծիքի արդար դատաստանին է յանձնում այդպիսի անձինքներին և նրանց վարմունքը, հաւատաշատ լինելով՝ որ եթէ կայ մեղանում հասարակական կարծիք, պիտի լինի ուրեմն և նրա դատաստանը:

(«Արարատ»)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Ամսիս 9-ին, չորեքշաբթի երեկոյան ժամը 8-ին տեղի ունեցաւ Գիւղատնտեսական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, ընկերութեան փոխ-նախագահ Բախմէտեւի առնապետութեամբ:

Հերթական հարցերն որոշուեց յետոյ, պ. Խատիսեան զեկուցում արեց 1893 թին Չիկագոյի ցուցահանդէսին ընկերութեան մասնակցութեան հարցի վերաբերմամբ: Յայտնեց, որ Ռուսաստանի ընդհանրական յանձնաժողովը, որին դիմել էր ընկերութիւնը, միայն 500 ռուբլի է յատկացրել Կովկասի արդիւնաբերութեան առարկաներն աշխարհանդէսն ուղարկելու ծախս: Ի նկատի ունենալով որ այդ չնչին գումարով դժուար է մի բան անել, ի նկատի ունենալով որ իբրեւ վերջին ժամանակամիջոց որոշված է փետրվարի 1-ը, ընկերութեան կողմից ընտրված մասնաժողովը որոշել է ուղարկել Չիկագոյի աշխարհանդէսը միայն Կովկասի արդիւնաբերութեան և արտահանութեան խոշոր արտադրութիւնների տեսակները, այն է՝ ցորենի, դարու, սիմիդրի, գինու, բրդի, պանիր, մետաքսի և բամբակի:

Այս կարգադրեց Գէֆեկու զեկուցումը՝ դաշտային միջերի մասին: Զեկուցագիրը հաստատում է, որ մեր երկրի գիւղական աղգարանութեան մեծ վտանգ է սպառնում դաշտային միջերի երեսից. այդ միջերը ահագին քանակութեամբ երկացել են Գանձակի, Թիֆլիսի և Բազուի նահանգներում անցեալ տարի աշնան և որովհետեւ միջերը առ հասարակ շատ բեղմնաւոր և բազմածին են, ուստի առաւելապէս դարձան նրանք սարսափելի արշաւանք կարող են գործել, եթէ այժմ մէկ իսկ միջոցներ ձեռք չառնվին նրանց կոտորելու մասին: Գալով մարաւան միջոցներին, զեկուցագիրը բացատրելով գիտութեան ցոյց տուած և հնարած միջոցները, երկար կանգ առաւ յայտնի պրոֆէսոր Լէֆլէրի գտած միջոցի վրա՝ Լէֆլէր գտել է մի տեսակ բայլը, որ միջերի մէջ ծնեցնում է տիֆ, այսինքն խառնելով միջերի կերակրի մէջ այդ բայլը, նրանք ուտելուց յետոյ ջարդվում են: Պրոֆէսոր Լէֆլէր, որը յայտնի Կոխի աշակերտն է, իր հնարած միջոցը գործադրել է ամենայն աջողութեամբ Գոնաստանում, երբ այս դարձան այդ երկրի ամենաարգաւանք մի մասը, Լարիսան, մօտ 22,000 դեռստանի տարածութեամբ, երկարակիլ էր դաշտային միջերի արշաւանքին. եթէ այդ միջերը չը կոտորվէին, ամբողջ Գոնաստանը կարող էր ենթարկվել սովի վտանգին: Լէֆլէր իր միջոցի փորձը հետեւալ կերպով կատարեց. գիւղացիները զամբիւղները լցրին ջրով թրջած հացի կտորտանքով կամ փշրանքով, որը վարակված էր տիֆային բայլիցներով. ահա այդ թրջված հացը սփռեցին դաշտի տարածութեան վրա և միջերն ուտելով, հիւանդացան ու սկսեցին դուրս գալ իրանց բնեւորից ու ստատակից:

Գէֆեկու զեկուցագիրը առաջարկում էր փորձել և մեր երկրում այդ միջոցը և կազմել մի մասնաժողով, այդ հարցը մանրամասն ուսումնասիրելու համար:

Երկար փնտրանքութիւնից յետոյ, որի ժամանակ անդամներից մի քանիսը այն կարծիքն էին յայտնում թէ Լէֆլէրի միջոցի աջողութիւնը բոլորովին ապացուցված չէ, թէ ուրիշ տեղերում այդ միջոցի գործարարութիւնն անաջող է դուրս եկել, որոշվեց ընտրել մի մասնաժողով և նրան յանձնել խնդրի ուսումնասիրութիւնը: Մասնաժո-

դուրի անդամներ ընտրվեցան—Գէորգի, Բաղդասար, Գրառ, Գրառ, Իսէյան և Տարաթանյան:

Գրանից յետոյ ընդհանուր ժողովն որոշեց՝ դեկտեմբերի 15-ին արտակարգ ժողով գումարել և տօնել հռչակաւոր դիմաւորման Պատեօրի 70-ամեակը, ի նկատի ունենալով որ այդ օր (դեկտեմբերի 15/27) ամբողջ լուսաւոր աշխարհը, Փրանսիական գիտութեան ակադեմիայի հրաւերով, կոչված է մասնակցել այդ տօնախմբութեան և ի նկատի ունենալով որ Պատեօր իր հռչակաւոր դիմաւորումն զարկ է տուել երկրագործութեան և գիւղատնտեսութեան զարգացման: Անդամները ունենցեալ փափաք յայտնեցին, թէ քանի որ դեկտեմբերի 15-ին, Կովկասեան Բժշկական ընկերութիւնն ևս տօնելու է Պատեօրի 70-ամեակը, աւելի լաւ կը լինի միացնել այդ երկու տօնախմբութիւնը և աւելի հանդիսաւոր կերպով կատարել, բայց յայտնեց, որ Բժշկական ընկերութիւնը մերժել է այդ առաջարկը:

Ապա ժողովը ձեռնարկեց ընկերութեան փոխ-նախագահի ընտրութեան: Միաձայն ընտրվեց այդ պաշտօնի համար խորհրդի առաջարկած Կարդի-գալ Շիմանովսկի:

Ա.

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄՅՑ

Գեկտեմբերի 8-ին

Ի նկատի առնելով, որ վերջերս Բաղդասար մեծ քանակութեամբ բաժնակէ տնտեսողներ, մեր երկրաւորներ իր անբողոք ուժով կենտրոնացրել է այնտեղ, և կարծես ուշադրութիւն անգամ չէ ուղղում դարձնել միւս կայարաններ լրացնել վաճառքներ պակասութիւնից ապրանքները ստացվում են այստեղ, մասնաւոր երկրորդական փոքրիկ կայարաններից, անասելի յետաձգութեամբ: Եւ իսկ իսկ թիֆլիսից ութ, ինչ օրում հաղւել ստացվում, չը նայելով որ փաշտող ապրանքներ էլ լինելին և այդ ոչ թէ մի կամ երկու անգամ, այլ շարունակ, կարծես սովորական կարգ լինել դա: Ինչու համար է այլ ևս երկրաւորներ, կամայ ակամայ մտածում է մարդ, երբ մեր հին էշապանները դրանից թէ շուտ և թէ էփան կը բերելին:

Ուշադրութեան արժանի է նաև մի ուրիշ երևույթ: Երբ Անդրկովկասեան երկրաւորում ամենափոքր կայարաններն անգամ քիչ թէ շատ կանոնաւոր ընդունում, Բաթումում այդ էլ չը կայ: Բայ տարածութեան վրա, մի խորաւոր ու քարոզանդ տեղում գրված է, Կեդրոն՝ կողքից երկու փայտեր ցցած և վրան բերեցնող, որի տակ պատասխարկում է արեւից և անձրեւից խեղճ զննող: Բայ կանոնաւոր տեղ կայ ապրանքը դարձնելու, և ոչ էլ դարձածի մասին կարելի է ասելով լինել, որ չի թրջվի անձրեւից: Տիչ է, կան մի քանի ողորմելի ծածկոցներ, որոնց անձրեւ ծածկանակ ծածկում են ապրանքները վրա, բայց չէ որ գիշերը յանկարծ կարող է անձրեւ գալ և ով է կրաշխաւոր, որ մշակները անմիջապէս կը վերկենան և կը ծածկեն նրանց:

Բարեգործական ընկերութեան Բաթումում ըսկած ուսումնարանի շէնքի համար մինչև այժմ ծախսված է 7986 ռուբլի, վերջապետ համար հարկաւոր է դեռ ևս 1000 ռուբլի: Երկրորդական յանձնաժողովը հաւաքել է առայժմ 3484 ռուբլի և փոխարկումարար ստացել է թիֆլիսի խորհրդից 3000 ռուբլի: Կակաւորող բաժնակէ շուտով կը հաւաքվի: Այդ տեղեկութիւնները ճիշդ են, որովհետև յանձնաժողովի անդամ պ. Խոջամիրեան բարի կերպ տեսարաններ մեղ տալ նայելու համար:

Բարեգործական ընկերութեան հիմնարկած ուսումնարանի փառս որ չէրը վերջանում է, և մի քանի ամիս անկասկած միջոց կունենանք աշակերտներին և աշակերտուհիներին տեղափոխելու այստեղ: Սակայն դա բաւական չէ. ունենալով ուսումնարանական շէնք և աղատվելով տարեկան 900 ռուբլի վարձ տալու ներդրութիւնից, ուսումնարանը մնում է այնու ամենայնիւ անապահով: Գրութեան մէջ, որի մասին հարկաւոր է լուրջ կերպով մտածել: Մի քանի հազար տարեկան ծախսի դիմաց ուսումնարանի հոգաբարձութիւնը չունի որ և է մուտքի հաստատուն աղբիւր. և նրա եկամտների մեծ մասը կազմում են պատահական նուէրները և թարմական ներկայացումները: Այդ տեսակ աղբիւրներով ուսումնարան անկարելի է պահել: Նուէրներ կարող են չը լինել, ներկայացումները սպասած օրը տար

կարող են չը տալ, ինչպէս և փաստը ցոյց տուեց: Վերջին անգամ տուած (Օտտոբրիւմ 1900 թ. 500 ռուբլի, մնաց միայն 50 ռուբլի: Անցեալ տարի, ուսումնարանական տարվայ վերջում, հոգաբարձութիւնը չէր կարողացել տան վարձը լրացնել վճարելուստեղիները մի քանի ամսվայ ուժեղեց տալ: Նոյն իսկ ուսումնարանի ծառան վարձ չէր ստացել: Տղեկ երեւոյթներ են դրանք, որոնց առաջը աչքը է առնել. և դրա համար հնչող միջոցներ կան, եթէ մտածող լինի: Ինչու համար, հարց է, երկրական տները ձրկաբար պիտի օգտվեն քաղաքի քանանները, երբ այդ տները տարեկան 600-ից աւելի օգուտ կարող են տալ ուսումնարանին: Հակառակ չենք, որ ժողովուրդը պատկառանքներն, բայց երբ այդ վերջիններից իւրաքանչիւրը տարեկան 1500-ից աւելի արդիւնք ունի, անարդարութիւն չէ, ասեցեք խնդրեմ, որ նրանք դրկեն ուսումնարանին իր եկամուտից. և որ քաղաքում են քանանները ձրի տներում ապրում: Ժողովուրդի բացարձակ իրաւունքն է պահանջել նրանցից՝ դարձակել այդ տները յօղուտ ուսումնարանի կամ քրէ՛հ վճարել: Եւ ուրիշ այդտեսակ հազար ու մի եկամուտներ կան, որոնք դանդաղ անձանց կարող են անցնում, և որոնք հիմնաւոր աղբիւրներ կարող էին լինել ուսումնարանի համար, եթէ աշխատողներ լինէին. բայց ունեն էք ասում:

Աբ. Ա. Կ.

ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՄՅՑ

Գեկտեմբերի 3-ին

Զանգեզուրի գիւղական ազգաբնակչութեան թրմւած կենսի մէջ ներկայումս ուրախալի շարժումներ են տեղի ունենում: Այդ շարժումներից մէկն է և այն, որ Զանգեզուրում ընկած դպրոցական գործը այս տարվանից մի նոր փառիսի մէջ մտնելով, կամայ-կամայ սկսում է մի որոշ գիւղը բռնել մեր գիւղական ազգաբնակչութեան մէջ և լայն ծաւալ ստանալ:

Ազգաբնակչութիւնի արդէն վաղուց յայտնի է ընթերցողներին, որ Զանգեզուրի պէս բազմաթիւ վտար գաւառ մինչև սոյն ուսումնական տարեթիւը ունի միայն երեք հատիկ դպրոցներ: Մեղ-բի, Բանալօթ գիւղերում և Գորիս աւանում: Այդ դպրոցներից ամենից առաջ բացված է Մեղբիից, իսկ ամենից յետոյ Գորիսից, որի բացումն տեղի ունեցաւ 1891 թ. 1-ին: Սրանից ընթերցող հասարակութեանը հնչել կը լինի երևակայել թէ ամբողջ գաւառն ընդհանրապէս և թէ Գորիսը մասնաւորապէս որքան յետադէմ են մնացած կրթական գործում: Գորիսը գաւառի կենտրոն լինելով, ուր գտնվում են գաւառական բոլոր վարչական հիմնարկութիւնները, ուր և կայ աչքի ընկնող լուսնալուսնա զատակալը, ամենից առաջ աչքը էր դարձնում բանար և օրինակ լինել իրան եկեղեցիից գիւղերին, սակայն, ցաւք արտի, նա ու ընդունեց դպրոցի նշանակութիւնը և այդ պատճառով միւս գիւղերն էլ ուշ արձագանք տուին նրան: Թէ այսպէս և թէ այնպէս, վերջապէս այսօր Զանգեզուրի երեք դպրոցների վրա աւելացած են 4 ծխական աղայոց դպրոցներ: Այդ դպրոցները բացված են՝ Քարահանջ, Շենք, Կաւարտ և Ալ-խաթեան գիւղերում: Ալխաթեան գիւղի դպրոցը անցեալ տարվանից է բացված, բայց կանոնաւոր դաստանդութիւն սկսված է այս տարվանից:

Խոսելով դպրոցների մասին, աւելիք համեմատելով մեր այս յօդուածում մի փոքրիկ համեմատութիւն անել գաւառում գտնվող բոլոր դպրոցների մէջ թէ նրախական և թէ բարոյական կողմերից: Բոլորը, բայց Գորիսի և Շենքի դպրոցները, գրեթէ ապահոված են, դրանց մէջ նշանաւոր դեր են խաղում: Կաւարտի կենտրոնական դպրոցը, որն այժմ ժողոված պատրաստի ունի 10,000 ռուբլի աչքի ընկնող մի գումար: Մեղբի գիւղից նոյնպէս ապահոված է, այդ դպրոցը իր կազմակերպութեամբ օրինակելի է, ոչ թէ միայն Զանգեզուրի համար, այլ և շատ տեղերի: Քարահանջ գիւղից նոյնպէս դպրոց լինելով, առաջ գնալու մեծ չափեր ունի, որովհետև ունի իր մօտ գրադասութիւն երաշխաւոր ներդրումը, որովհետև նրա յայտնի բարեգործ Ա. Ծատուրեան և Գեորգեզեաններ, որոնք Քարահանջի հարազատ գաւառներն են: Այս տարի այդ գիւղի համայնքը մի ուղեւորով զինեց պ. Ա. Ծատուրեանին, որ նա դրամական օժանդակութիւն ցցեց տայ դպրոցին: Պ. Ծատուրեան խոստացել է ևս հաճութիւն է ցցեց տուել եկող տարի զաւայեռներ և իր

ձեռքով դնել դպրոցական շէնքի հիւրք. այդ բոլորի ետեղից մի համակրական լուր է պտտվում, որպէս թէ պ. Ծատուրեանի մէջ միտք է յղացել դպրոցն իր անունով հիմնել: Նրանի թէ այդպէս լինել, որով յիշեալ բարեգործը մասնակցի կանէր դպրոցն այն բաղնիսի մասնակցների համար, որոնք աղքատ լինելով, դուրկ են մնում անաստարակական կրթութիւնից:

Վերջապէս մեր խօսքը Զանգեզուրի այժմեան դպրոցների մասին, հարկ ենք համարում կրկնել այն աքսիոման մասին ճշմարտութիւնը, թէ կրթված քանանան և գիւղական ինտելիգենցիան գիւղական կենսիցում ամեն բան կարող են ստեղծել: Առաջին օրպէս փաստ կարող է լինել այն հանգամանքը, որ Քարահանջ գիւղը, ուր ժողովուրդը տղէտ լինելով, կուսակցական ոգին ծայրահեղութեան էր հասցրած, նորոշով Գեորգեզեանների անընդատ խորհուրդների և յորդորների, կարճ միջոցում դպրոց ունեցաւ: Չենք կարող այստեղ չը յիշատակել հայր-տեսուհի Մեղեանցի այն անձնատուր ջանքերն ու աշխատութիւնները, որ նա իր աշխատութեան ժամանակ գործ էր դնում ամեն մի գիւղում դպրոց բանալու համար: Արժանապատիւ հայրը 1891 թ. 1-ին, իր չըբաղայութեան ժամանակ, մեր գաւառում դպրոց բանալու համար 14 գիւղերից ստորագրութիւն էր վերցրել. այդ բոլորից այս տարի բացվեցան միայն 4 դպրոցներ և 2 դպրոցներ էլ եկող տարի անշուշտ կը բացվեն Տիւր և Տաթև գիւղերում, որոնք նոյն իսկ այժմեանից հազացվում են դպրոցական պարագաներ:

Ի դէպ, այստեղ յիշատակենք մի գիւղի անուն, որը իր մեծակայնի անշարժութեամբ վատ օրինակ է տրուում ստորագրութիւն է թողնում միւս գիւղերի վրա. այդ խնձորակն է, Զանգեզուրի ամենահարուստ և ամենամեծ գիւղը, որն ունի 900 տուն բնակիչ: Հայր տեսուհի այդ գիւղի համայնքից մի կերպ ստորագրութիւն առնելով, պարտաւորեցրեց նրան դպրոց ունենալ, բայց առանցսում է երկրորդ տարին և վրա է հասնում երրորդը, իսկ մեր հարուստ խնձորակնից մէջ չէ նկատվում ոչ մի շարժում և, ինչպէս ստուգած ենք, մոլորեալ անգամ չէ անցնում ուսումնարան բաղը:

Բ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԷՏԻՑ

Գեկտեմբերի 2-ին

Նոյեմբերի 28-ին, չորաթի, տեղիս հայոց ուսումնարանի վարչութիւնը հանդիսուող կերպով տօնեց մեր նախկին լուսաւորիչներ թաղէս և Բարդուղիմէոս առաքելաւորների տօնը: Ա. պատաւազկից յետոյ ուսումնարանի անանի և տանուհիների հետ միասին շէնքի պարտականութեան չափի հետ ամօրսը ցրեց օրինաւոր դպրոցի դահլիճը: Հանդէսը բացվեց Տէրուական աղօթքով, որ երեք դպրոցի երեքից խօսեց: Ապա ուսուցիչները մի քանիք ասանախօսութիւններ արեցին, ծանօթացնելով հանդիսականներին թաղէս և Բարդուղիմէոս առաքելաւորների գործունէութեան հետ: Աշակերտները և աշակերտուհիները երգեցին օրվայ պատշաճին վաղեկ երգեր և կարգաքննութեան համար ժողովուրդը գոհ մնաց այդ փառաւոր տօնախմբութիւնից, որովհետև այդ առաջին անգամ էր, որ ս. Առաքելաւորի տօնը այդպիսի մի հանդէսով կատարվում էր Նոր-Բայաձէսում:

«Մշակ» 132 №-ում գրել էի՝ թէ տեղիս ուսուցչական խումբը մտադիր է մի քանի օրից յետոյ մի ներկայացում տալ: Բայց որովհետև ներկայացումը մինչև այսօր դեռ ևս չէ տեղի ունեցել, այդ պատճառով պատրաստութիւն ևս համարում յայտնել որ դրա միակ պատճառը այն է, որ Նոր-Բայաձէսի թէ տեղիները և թէ օրիորդները համաձայնութիւն չեն յայտնում բեմ դուրս գալու հասարակութեան առաջ, որովհետև տեղիի ժողովուրդը թաղութեան բեմ վրա երևացող կանանց սեռի մասին առհասարակ վատ դատարար է կազմում: Թէ երբ պէտք է հաստատանայ մեր գաւառական ժողովուրդը և թէ երբ կընտելանայ հասարակական գործունէութեան ոգուն,—այդ չենք կարողանում իմանալ...

Զինուորական աստանը աւարտելով իր նիստերը Գարաշիւղի և Ալաշիքի գաւառներում, անցեալ Նոյեմբերի 28-ին շարունակեց իր նիստերը՝ Կաւարտի Նոր-Բայաձէսում: Այդ օրը թէ Նոր-Բայաձէսի և թէ չըջակայ մի քանի գիւղերի նորակազմերը հրաւիրեցին զէպի

վիճակահանութիւն: Ատենին նախագահում էր տեղիս գաւառապետ պ. Յորտաձէս: Ժողովուրդի մէջ անկարգութիւններ տեղի չունենալու համար, գաւառապետի կարգադրութեամբ ջաղաքի բոլոր գիւնտները վաղ առաւօտից փակվեցին, չը նախած որ դեռ 2—3 օր առաջ զինուորացու երկուստարները առանձին խմբեր բաժանված թէ՛ և ընկերակցական խմբերներ էին սարքել:

Հրապարակական մաղթանքից յետոյ զինուորացուները, թուր անկի քան 300 հոգի, վիճակահանութեան երկրորդ օրը, որոնցից իսկական զինուոր օրայվեց 25 հոգի: Զինուորները երկուստեղ չունեցող հայ քանակից արձակվեցան իրանց տները մինչև դեկտեմբերի 10-ը, այն պայմանով, որ նոյն օրը պարտաւոր են անմիջապէս ներկայանալ զինուորադրական աստանին, զորքի մէջ ընդունվելու համար: Ատենը վերջացրեց իր զործունէութիւնն ամսիս 1-ին, կէս օրվայ ժամը 2-ին:

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԿՈՂԲՈՅՑ

Գեկտեմբերի 3-ին

Բարդուղի լեռան և յայտնի աղահանքի միջև մի սիրուն բլրակի վրա ընկած է Կողբ գիւղը: Այս գիւղից վայրը Սուրբապետ գաւառում, խզիլի աւանից յետոյ, ամենայն իրաւամբ երկրորդ կարգ է համարվել թէ իր վաճառականութեամբ և թէ այլ արժանատիութիւններով: Ունի մօտ 500 տուն հայ բնակիչ, որոնք պարտաւոր են երկրագործութեամբ և վաճառականութեամբ: Երկրագործութիւնից ստանում են ցորեն, գարի և բամբակ, որ իր աղիւս տեսակով երևանի նահանգում յայտնի է: Խեղդաղու, Հասար, Չինչաւատ, Խաւրի, Ղաղաղ, Շահաւատ, Զրեւու, Սուրբապետ, Թուրքաթի, Թաղաթիւ, Ալխաթու, Աքարաթի, Քաղաւ և այլ տանեակ թրքաբնակ գիւղական բնակիչները, որոնք 5000-ից աւելի են, Կողբից են աւանուր անում: Գեռ չեմ հաշուում չըբնակաբերներ, որոնց ամեն քայլափոխում կարելի է պատահել Կողբում: Սրանց կանանց ձեռքի գեղեցիկ գործուածները (որոք և կապիւտ) Կողբում ամեն տան և խանութում կարելի է տեսնել: Այս բանին նպաստում է մասամբ Կողբի զիւրք և մասամբ հարուստ աղահանքը: Արդէն այստեղ պատրաստ է արքունական խնուղին և շուտով խզիլի-երեւանեան ճանապարհի հետ կը միանայ: Աւելորդ է ասել թէ որքան կը ծաղկի Կողբի աւանտները:

Սուրբապետ գաւառում դա՛ խզիլից յետոյ երկրորդ գիւղն է, որ ունի կանոնաւոր միջոցաւ ուսումնարան, որտեղ սովորում են 80-ի չափ աշակերտներ և մի քանի էլ աշակերտուհիներ: Եթէ զըբոլորը տեղ ունենաւ, նրա աշակերտների թիւը 120-ի կը հասնէր այս տարի, գուցէ և աւելի: Արդէն յիշվում են բոլորովին նոր ձևի նստարաններ աշակերտների համար. դարձան պարտաւոր կը լինեն և երկու տեսակներ, որոնց պատրուքը քաղված են արդէն, մնում է միայն ծածկել: Գըբոլորցի իր աշխատութեամբ պարտական է հոգաբարձու պ. Մինայ Սերգեյիչ Տէր-Յովհաննիսեանին, որի խօսքը կողբեցիների համար յարգելի է: Սրա հնորան էր, որ արժանապատիւ թեմական տեսչին աշխուղեց ամսիս 5-ին դպրոցը երկրպետանի վերածել և բաւականին նախանձելի դրութեան մէջ դնել: Վատ է և դրոյցի բնական պատրաստութիւնը, սակայն օրգան է դարձաւ վիճակը: 50 կտոր մանկական գրքեր և «Մշակ»-ի 1891 թ. համարները, ահա նրա ամբողջ հարստութիւնը: Յանկալի էր, որ հոգաբարձութիւնը իր նախահաշիւ մէջ մտցնէր գէթ 30 ռուբլի տարեկան յօդուտ գրադարանի և այս մասնաւոր նուէրների հետ նրան բաւական է. ում յայտնի չէ, որ անագին ուղկանուր կաթիլներից է կաղնված:

Աւելորդ չեմ համարում մի քանի խօսք էլ Կողբի երկրաւորների մասին ասել. դրանց 70% այստեղ գրագէտ է և ազատ կերպով կարող է կարգաւ ու կարգաւոր հասկանալ. ասկայն սէր դէպի ընթերցանութիւնը չը կայ այստեղ. մասամբ մեղաւոր է դպրոցը և մասամբ ինքը երկրաւորութիւնը: Նա միջոց և յարմարութիւն ունի ընկերութիւններ կազմելու, գրքեր և լրագիրներ ստանալու և կարգաւոր, սակայն չէ անում: Հայերեն լրագիրներից միայն «Մշակ» է ստացվում: Զանիւղեղանի գրասենականութիւն: Ապա ինչ է աւանում երկրաւորութիւնը. կը պատասխանեք կամ ձեռքերը ծալած խանութի առջև անգործ

Պատիւ ունենք յայտնելու Կովկասի պ.պ. ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ, որ մեզ
գտնվելով մշտապէս Վարչախումբ մեր անփական գործերի պատճառով, ընդունում է
կատարում ենք նաև ուրիշների համար ամեն տեսակ թէ ԱՌԵՆՈՒ և թէ ՏԱՆՆՈՒ
վերաբերեալ յանձնարարութիւններ:

ՆԵՐԱՐԸ Ե Ա Ր Ղ Ո Ւ Լ Ե Ա Ն Ց Ն Ե Ր
ՄԵՐ Հասցէն. Варшава, Переѣздъ, д. № 9 № 117 15—15

Կոնցերտից յետոյ լինելու է ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵՎԱՅԻՆ Հիւրերը ընդունվում են ընդհանուր կանօնների հիման վրա: Տեղերի զինը, 1 կարգը և լիտեր 1 բուբլի. 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11—50-ական կօպէկ: Միացածները 30 կօպէկ: Սկիզբը 8 ժամին երեկոյան:

ԽՈՒՂԱՎԵՐՈՒՄՆԵՐ ԵՊԲԱՐՆԵՐ

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 432